

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 49/4

24 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց Արշավիր Հարությունյանի 26.10.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 15.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 295947/01 որոշման դեմ:

Արշավիր Հարությունյանի գանգատում բերված փաստարկները.

Վարչական մարմինը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջները, այն է՝ վարչական մարմինը չի իրականացրել գործում եղած փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում, ինչի արդյունքում կայացվել է ոչ իրավաչափ վարչական ակտ:

Այսպես, Վարչական մարմինը 15.10.2015թ. կայացված թիվ 295947/01 որոշումը կայացրել է ՀՀ ՖՆ 23.09.2015թ. թիվ 5102028 ակտի հիման վրա, իսկ դեռևս 02.10.2015թ. «ԲՐԵՆԴ ԼԻԴԵՐ» Հ/Ձ ՍՊԸ-ի կողմից ՀՀ Վարչական դատարան է ներկայացվել վիճարկման հայց (որի մասին քաջատեղյակ է նաև Վարչական մարմինը), որով խնդրել է Դատարանից ամբողջությամբ վերացնել ՀՀ ՖՆ 23.09.2015թ. թիվ 5102028 ակտը:

ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Վիճարկման հայցը վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը (...):»:

Կասեցումն ինքնին նախատեսում է վարչական ակտի կամ վարչական վարույթի գործողության ժամանակավոր ընդհատում դրա վերաբերյալ քննության կամ դրա հետ փոխկապակցված և առաջինի ելքի վրա անմիջական ազդեցություն ունեցող մեկ այլ վարչական վարույթի ավարտը: Այսինքն, վարչական ակտի գործողության կասեցումը քննության ընթացքում ըստ էության սահմանափակում է դրա իրավական ուժն ու պարտադիր գործողությունը դրանում նշված սուբյեկտի նկատմամբ, որի ընթացքի վերջում բացառված չէ նաև դրա վերացումը:

Այս պարագայում ՀՀ Վարչական դատարանը դեռևս 09.10.2015թ. վերը հիշատակված վիճարկման հայցն ընդունելով վարույթ (վարչական գործ թիվ ՎԴ 5342/05/15), արդեն իսկ այդ որոշման հիման վրա օրենքի ուժով կասեցվել է ՀՀ ՖՆ 23.09.2015թ. թիվ 5102028 ակտի գործողությունը: Հետևաբար, վարչական ակտի իրավաչափության հարցը կասկածի տակ դնելու դեպքում, ինչպես նաև դրա իրավական ուժը դադարեցված լինելու ժամանակահատվածում, իրավական ողջամտության սահմաններից դուրս է դրա հիման վրա վարչական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը, որպիսի հիմքով էլ վարչական մարմինն ընդհանրապես չուներ որևէ իրավական հիմք այդ ակտի հիման վրա վարույթ հարուցելու և պատասխանատվության միջոց կիրառելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ, ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 286-րդ, 288-րդ

հողվածներով գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել և բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 15.10.2015թ. թիվ 295947/01 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 15.10.2015 թ-ի 1102 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ «Բրենդ Լիդեր» ՀՁ ՍՊԸ տնօրեն Արշավիր Հարությունյանը, համաձայն ՀՀ ՖՆ ԽՀՎ ՀՏ 23.09.2015 թ-ի թիվ 5102028 ակտի, հաշվապահական հաշվառումը վարել է այնպիսի խախտումներով, որն առաջացրել է հարկի նվազեցում: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 1-ին մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 15.10.2015 թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 295947/01 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Արշավիր Հարությունյանի նկատմամբ վարչական տույժ նշանակելու, այն է՝ 25.000 դրամի չափով տուգանք կիրառելու մասին:

Քննարկվող դեպքում Որոշումը կայացվելու համար հիմք է հանդիսացել ՀՀ ՖՆ ԽՀՎ ՀՏ 23.09.2015 թ-ի թիվ 5102028 ակտը, որը վերացնելու պահանջի մասին «Բրենդ Լիդեր» ՀՁ ՍՊԸ կողմից ՀՀ վարչական դատարան է ներկայացվել հայցադիմում: ՀՀ վարչական դատարանի 09.10.2015 թ-ի թիվ ՎԴ 5342/05/15 որոշման համաձայն հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Գանգատում բերված պնդումները, որ ՀՀ վարչական դատարանի կողմից 09.10.2015 թ-ին հայցադիմումն վարույթ ընդունվելու պայմաններում Որոշումը չպետք է կայացվեր, ըստ էության, հիմնավոր չեն հետևյալ պատճառաբանությամբ:

Չնայած նրան, որ ՀՀ վարչական դատարանի 09.10.2015 թ-ի թիվ ՎԴ 5342/05/15 որոշմամբ վերոգրյալ հայցադիմումն ընդունվել է վարույթ, սակայն վարչական մարմինն այդ մասին տեղեկացել է միայն 21.10.2015 թ-ին: Ընդ որում հարկ է նշել, որ Արշավիր Հարությունյանին պատշաճ ծանուցվել է գործի քննությունը 15.10.2015 թ-ին տեղի ունենալու մասին, սակայն Արշավիր Հարությունյանը չի ներկայացվել գործի քննությանը: Այսինքն, վարչական մարմինը որևէ կերպ տեղեկացված չի եղել վերոգրյալ ակտի դեմ ներկայացված հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի կողմից վարույթ ընդունվելու մասին: Նման պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 15.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 295947/01 որոշումն ընդունվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ ղեկավարվելով ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, ՀՀ ՖՆ ԽՀՎ ՀՏ 23.09.2015 թ-ի թիվ 5102028 ակտը վերացնելու պահանջի մասին ընկերության հայցադիմումը վարույթ ընդունվելու պայմաններում, անհրաժեշտ է ձեռնպահ մնալ Որոշման կատարմանն ուղղված գործողություններից՝

մինչև ՎԴ 5342/05/15 գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝

Ձեռնպահ մնալ Որոշման կատարմանն ուղղված գործողություններից՝ մինչև ՎԴ 5342/05/15 գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ